ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հուլիսի 2024 թվականի N 1019 - Ա

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ
ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 4-րդ հոդվածի 3-րդ մասը, 685-րդ, 688-րդ հոդվածները, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը, 9-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական հանձնաժողովի միջև «Հայաստանում միջուկային անվտանգության խթանում և սթրես-թեստերի վերաբերյալ առաջարկությունների իրագործում» համաձայնագրի շրջանակներում Եվրոպական հանձնաժողովի կողմից ստացված գույքը, համաձայն NN 1 և 2 հավելվածների, ամրացնել Հայաստանի Հանրապետության միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե):

2. Սույն որոշման 1-ին կետում նշված աշխատանքների ավարտից հետո N 2 հավելվածում նշված գույքն անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով

տրամադրել «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն):

3. Կոմիտեի նախագահին՝ երկամսյա ժամկետում ապահովել NN 1 և 2 հավելվածներում նշված գույքի հաշվառումը կոմիտեի հաշվեկշռում:

4. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշման 3-րդ կետում նշված աշխատանքների ավարտից հետո կոմիտեի և ընկերության հետ համատեղ կնքել N 2 հավելվածում նշված գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

5. Սահմանել, որ N 2 հավելվածում նշված գույքի հանձնման-ընդունման և պայմանագրի կնքման ընթացքում առաջացած ծախսերը ենթակա են իրականացման ընկերության ֆինանսական միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

04.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ